գիտական աշխատանքները բավականին սակավ են և տվյալ գործընթացների հետ կապված խնդիրները խորապես բացահայտված չեն, ուստի հենվելով մի շարք հետազոտությունների վրա (Tanajyan K. et al., 2021; Mirzakhanyan R. Et el., 2017)՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունը, լինելով շախմատային կրթության առաջամարտիկը, իր վրա կրում է պարտավորություն աշխարհին ներկայացնել վերոնշյալ խնդրի հետազոտական հիմնավորումները՝ նպատակ ունենալով համաշխարհային կրթական դաշտում ցույց տալ տվյալ կրթական բարեփոխման ուղղությունը: Սպորտային հաղթանակների ու նվաճումների շնորհիվ երեխան կարող է գերազանց արդյունքներ ցուցաբերել դպրոցական մի շարք ուսումնական ծրագրերում (Peter G., Mirko W. & Julia Sch., 2016): Շախմատային հաղթանակների ու նվաճումների ազդեցությունը մեծ է սովորողների ուսումնական մոտիվացիայի վրա, իսկ ներկայիս պայմաններում, մասնավորապես ՀՀ-ում ուսումնական մոտիվացիայի նվազման հետ կապված էլ ավելի լայն հնչեղություն և արդիականություն է ստանում տվյալ թեմայի հետազոտումը:

Հետազոտության նպատակն է բացահայտել շախմատային նվաճումների դերը սովորողների ուսումնառության գործընթացում և ուսումնական մոտիվացիայի բարձրացման գործում: Նպատակից առանձնացվել են հետազոտության հետևյալ խնդիրները.

1. պարզել շախմատի՝ որպես մարզաձևի ազդեցությունը սովորողի ուսումնական առաջադիմության վրա:
2. Դուրս բերել սովորողի մոտիվացիոն համակարգի բաղադրիչները և մոտիվացիայի վրա ազդող գործոնները:
3. Ուսումնասիրել շախմատային հաղթանակների և սովորողի ուսումնական առաջադիմության միջև առկա կապը ծնողների դիտանկյունից:
4. Ցույց տալ շախմատային մրցաշարերի դերը սովորողի ուսումնական վարքագծի մեջ:
5. Բացահայտել շախմատային հաջողությունների ազդեցությունը այլ ուսումնական առարկաների համատեքստում:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հետազոտությունն իրականացվել է քանակական և որակական մեթոդների համալիր կիրառմամբ: Քանակական մեթոդներից կիրառվել է կիսաձևայնացված հարցման մեթոդը, որը հնարավորություն է տվել բացահայտել շախմատային հաջողությունների ազդեցության առանձնահատկությունները՝ ուսումնական մոտիվացիայի վրա: Հարցումներն իրականացվել են ՀՀ Շախմատի ազգային ակադեմիայի հաջողություն գրանցած սաների (թվով՝ 122) ծնողների հետ: Կիրառվել է համատարած ընտրանք: Որակական մեթոդներից ընտրվել է հարցազրույցի մեթոդը, որն իրականացվել է փորձագետների հետ: Փորձագիտական հարցազրույցի համար կիրառվել է չափանիշների վրա հիմնված ընտրանք<sup>16</sup>:

Փորձագիտական հարցազրույցների տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ այսօր կարևորվում է շախմատի՝ որպես ուսումնական առարկայի, դերը երեխայի տրամաբանական մտածողության, հիշողության, ուշադրության և երևակայության զարգացման գործընթացում: Շախմատային մտածողությունը երեխայի մոտ ձևավորում է լայն մտահորիզոն, այլընտրանքային մտածողության ձևեր: Փորձագետների մեծամասնության կարծիքով՝ շախմատային հաղթանակներն այսօր էական նշանակություն ունեն և դրական ազդեցություն են թողնում երեխայի ուսումնական գործընթացի, ուսումնական առաջադիմության և ուսումնական վարքի վրա:


Հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ տարբեր հաճախականությամբ հաղթանակներ ունեցող սովորողներից յուրաքանչյուրի ուսումնական գործընթացը յուրովի է կրում շախմատային կրթության ազդեցությունն իր վրա: Այսպես, *երբեմն* հաղթանակներ ունեցող սովորողների մեծամասնության 30%-ի մոտ շախմատային կրթության միջոցով ձևավորվել է տրամաբանական մտածողություն, 20%-ի մոտ՝ զարգացել է ուշադրությունը, 17,3%-ի մոտ ձևավորվել է մրցակցային ոգի և փոքր մաս են կազմում այն սովորողները, ում մոտ ձևավորվել է հաղթանակների ձգտելու պատրաստակամությունը, զարգացել է երևակայությունը և ամրապնդվել է հիշողությունը՝ յուրաքանչյուրը կազմելով 5,5%: *Մեծամասամբ* հաղթանակներ ունեցող սովորողների գերակշիռ մասի մոտ՝ 31,5%, ևս զարգացել է

---

<sup>16</sup>Հետազոտական տվյալների հավաքման գործընթացն իրականություն է դարձել ՀՊՄՀ ուսանողուհի Ս. Պետրոսյանի ջանքերով:

տրամաբանական հիշողությունը, 19,7%-ի մոտ՝ ուշադրությունը, 18,5%-ի մոտ ամրապնդվել է հիշողությունը, միայն 1,1%-ն է նշել, որ շախմատային կրթության արդյունքում երեխան դարձել է ավելի ինքնամփոփ: *Բոլոր մրցաշարերում հաղթող սովորողների մեծամասնության մոտ ձևավորվել է մրցակցային ոգի՝ 26,1%, 22,2%-ի մոտ ձևավորել է հաղթանակների ձգտելու պատրաստակամություն, իսկ 4,9%-ի մոտ ամրապնդվել է հիշողությունը: Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ բոլոր մրցաշարերում հաղթող և մեծամասամբ հաղթող սովորողների մոտ հաղթանակների ձգտումը, մրցակցային ոգին ավելի ցայտուն է արտահայտված, քան այն սովորողների մոտ, որոնք երբեմն կարող են հաղթել մրցաշարերի ժամանակ: Կարող ենք ենթադրել, որ մրցաշարերի հաճախակի մասնակցության շնորհիվ սովորողի ուսումնական վարքը կարող է դրականորեն բարելավվել (տե՛ս գծապատկեր 1):*

Երեխայի ուսումնական վարքը՝ շախմատային մրցաշարերում գրանցած հաղթանակների հաճախականությամբ



Փորձագիտական վերլուծությունը ցույց տվեց, որ «Շախմատ» ուսումնական առարկան նախ և առաջ իր դրական ազդեցությունն է թողնում սովորողի ուսումնական առաջադիմության բարձրացման վրա, սակայն ավելի քիչ թվով փորձագետներ ընդգծեցին, որպրոֆեսիոնալ շախմատով զբաղվելու դեպքում երեխայի ուսումնական առաջադիմությունը կարող է նաև տուժել, քանի որ ամենօրյա մարզումները երկար ժամանակ են խլում:

Քանակական հարցումները ցույց տվեցին, որ շախմատային հաջողություններ գրանցած սովորողների *արական սեռի* մեծամասնության առաջադիմությունը՝ 58,1%-ը փոփոխվել է շախմատով զբաղվելու արդյունքում, իսկ 41,9%-ի դեպքում այն չի փոփոխվել: Պատկերը նույնն է նաև *իգական սեռի* սովորողների մոտ. մեծամասնության՝ 59,1%-ի առաջադիմությունը, ըստ հարցման արդյունքների, փոփոխվել է շախմատով զբաղվելու արդյունքում, իսկ 40,9%-ի դեպքում չի փոփոխվել: Ինչպես տեսնում ենք ուսումնական առաջադիմությունը երկու սեռի դեպքում էլ փոփոխվում է հավասարաչափ:

Ըստ տարիքային առանձնահատկության՝ 7 տարեկան սովորողների մեծամասնության ուսումնական առաջադիմությունը փոփոխվել է դեպի դրականը. 78,2%, փոխվել է դեպի բացասականը՝ 21,8%: 8 տարեկան սովորողների մեծամասնության դեպքում՝ 65,3%, ուսումնական առաջադիմությունը փոփոխվել է դեպի դրականը, 34,7%-ինը՝ գրեթե մնացել է նույնը: 9 տարեկան սովորողների մեծամասնության՝ 78.9%-ի առաջադիմությունը փոփոխվել է դեպի դրականը, 10.5%-ի դեպքում համապատասխանաբար փոփոխվել է դեպի բացասականը և մնացել անփոփոխ: 10 տարեկան սովորողների մեծամասնության՝ 66.7% դեպքում՝ ևս առաջադիմությունը փոփոխվել է դեպի դրականը և ավելի փոքր մասի՝ 8.3%-ի դեպքում է փոխվել դեպի բացասականը: 11 և 12 տարեկան սովորողների դեպքում պատկերը էականորեն չի փոխվում. այս դեպքում ևս մեծամասնության մոտ ուսումնական առաջադիմությունը դրական տեղաշարժ է ունեցել: Ընդհանուր առմամբ տեսնում ենք, որ տարիքային առանձնահատկություններից և օրինաչափություններից կախված՝ երեխաների ուսումնական առաջադիմության փոփոխությունները շախմատային հաջողությունների ազդեցության պայմաններում

էականորեն չեն տարբերվում, և 7-12 տարեկան սովորողների մեծամասնության ուսումնական առաջադիմությունն էականորեն դրական փոփոխություններ է կրում:

Հետազոտության ընթացքում իրականացվել է շախմատային հաջողություններ գրանցած սովորողների ուսումնական առաջադիմության փոփոխության վերլուծություն՝ ըստ շախմատային կարգերի: Այսպիսով՝ 4-րդ կարգի սովորողների մեծամասնության՝ 52.4%-ի ուսումնական առաջադիմությունը փոփոխվել է, իսկ 47.6%-ինը՝ ոչ: 3-րդ շախմատային նկարգ ունեցող սովորողների մեծամասնության՝ 70.8%-ի առաջադիմությունը փոխվել է, իսկ 29.2%-ինը՝ ոչ: Պատկերը նույնն է նաև 2-րդ շախմատային կարգ ունեցող սովորողների շրջանում, մեծամասնության՝ 65.5%-ի առաջադիմությունը փոփոխվել է, իսկ 1-ին կարգ ունեցող սովորողների մեծամասնության՝ 66.7%-ի ուսումնական առաջադիմությունը չի փոխվել՝ ի տարբերություն մյուս կարգայինների: Այստեղ տեսնում ենք, որ մեծամասամբ փոփոխություն չի նկատվում 1-ին շախմատային կարգ ունեցող սովորողների ուսումնական առաջադիմության մեջ:

Անդրադառնալով ուսումնական գործընթացում շախմատային հաջողությունների ազդեցությանը՝ փորձագետները հիմնականում շեշտում էին, որ հաղթանակները երեխաներին, անկասկած, մոտիվացնում են ակտիվ ներգրավվածություն ունենալ ուսումնական գործընթացում, ունենալ մեծ պատրաստակամություն և ոգևորություն, լինել հաջողակ ուսման մեջ:

Քանի որ հետազոտության ընթացքում փորձել ենք պարզել, թե ինչպես է փոփոխվում երեխայի ուսումնական առաջադիմությունը շախմատային հաջողությունների գրանցման դեպքում նպատակահարմար էր պարզել երեխայի սովորելու ձգտումը ուսումնական մի շարք առարկաների տեսանկյունից, ուստի հետազոտության արդյունքների վերլուծության շնորհիվ պարզվեց՝ հարցվողների մեծամասնության՝ 75%-ի սովորելու ձգտումը բարձրացել է մաթեմատիկա առարկայի, 46.2%-ինը՝ օտար լեզուների, 45.2%-ը մայրենի լեզվի և 28.7%-ը բնագիտական առարկաների համատեքստում: Հարցվողների մեծամասնության՝ 57.3%-ի սովորելու ձգտումն անփոփոխ է մնացել երաժշտություն, 57.1%-ինը՝ կերպարվեստ, 55.1%-ը՝ տեխնոլոգիա, 34.2%-ը հումանիտար առարկաների շրջանակում: Հարցվողների մեծամասնության՝ 33.3%-ի սովորելու ձգտումը նվազել է

բնագիտական առարկաների, 30.3%-ինը՝ հումանիտար առարկաների, 19.2%-ը մայրենի առարկաների շրջանակում: Ինչպես ենթադրվում էր, շախմատային հաջողությունները մոտիվացնում են երեխային սովորել մեծամասամբ մաթեմատիկա, մայրենի և օտար լեզուներ, իսկ մնացյալ առարկաները որոշ չափով դուրս են մնում երեխաների հետաքրքրության շրջանակից:

Փորձագետների մեկնաբանությամբ շախմատային հաղթանակների շնորհիվ երեխաները ձգտում են լինել առաջինը՝ թե՛ կրթությանմեջ, թե՛ սպորտում, թե՛ ցանկացած գործունեության մեջ: Շախմատային հաջողությունների ազդեցությամբ՝ ուսումնական առաջադիմության դրական տեղաշարժի դեպքում նկատվում են ուսումնական առարկաների նկատմամբ սովորելու ձգտման փոփոխություններ: Հարցվողների շրջանում մեծամասնությունը նշում է, որ մի շարք առարկաների շրջանակում երեխայի *ուսումնական ձգտումը բարձրացել է*, մասնավորապես շոշափելի են Մաթեմատիկա՝ 89,6%, Մայրենի՝ 55,3%, Օտար լեզուներ՝ 40,5%, և Բնագիտական՝ 34.1%, ուսումնական առարկաների շրջանակում առկա փոփոխությունները, որտեղ սովորողների սովորելու ձգտումը նշանակալիորեն բարձրացել է: *Ուսումնական ձգտումը* նվազել է մեծամասամբ բնագիտական և հումանիտար առարկաների շրջանակներում համապատասխանաբար՝ 26.8% և 27.8%: Հարցվողների մեծամասնությունը նշել է, որ *ուսումնական ձգտումը մնացել է անփոփոխ* կերպարվեստ՝ 69%, երաժշտություն՝ 79.5% և տեխնոլոգիա՝ 71,2%, ուսումնական առարկաների շրջանակում:

Մի շարք փորձագետներ էլ նշեցին, որ այնուամենայնիվ շախմատում կարևորվում են անհատական առանձնահատկությունները, և եթե երեխան ունի գերազանց սովորելու մեծ պատրաստականություն, համառություն, ապա սպորտային հաղթանակները կարող են պարզապես ոգևորելու համար լինել, այլ ոչ թե հանդես գալ, որպես խթան: Սովորաբար հաղթանակներ գրանցած սովորողները ուսուցման գործընթացում որևէ խնդիրների հետ չեն բախվում: Այս տեսանկյունից փորձագետները կարևորում էին ծնողների, ընկերների դերը, որոնք իրենց աջակցությամբ կարող են մոտիվացնել երեխային հաջողակ լինել ամենուր:

Ըստ մրցաշարերի և օլիմպիադաների ունեցած մասնակցության հաճախականության՝ փորձել ենք պարզել սովորողների ուսումնական

առաջադիմության փոփոխությունները: Շախմատային *բոլոր մրցաշարերին և օլիմպիադաներին միշտ մասնակցություն ունեցող* սովորողների մեծամասնության 66,7%-ի առաջադիմությունը գրեթե մնացել է անփոփոխ, 60%-ինը փոփոխվել է դեպի բացասականը, իսկ 38,9%-ինը՝ դեպի դրականը: Շախմատային *մրցաշարերին և օլիմպիադաներին հաճախ մասնակցող* սովորողների մեծամասնության՝ 35,2%-ի առաջադիմությունը փոփոխվել է դեպի դրականը, իսկ 22,2%-ինը՝ մնացել անփոփոխ: Շախմատային *մրցաշարերին և օլիմպիադաներին երբեմն մասնակցող* սովորողների մեծամասնության՝ 40%-ի առաջադիմությունը փոփոխվել է դեպի բացասականը, 25,9%-ինը՝ դեպի դրականը և միայն 11,1%-ի ուսումնական առաջադիմությունը գրեթե մնացել է անփոփոխ: Վերլուծության արդյունքում տեսնում ենք, որ մրցաշարերում մասնակցությունը ևս կարևոր ազդեցություն է թողնում ուսումնական առաջադիմության վրա:

Հետազոտությանը մասնակցած հաջողություններ գրանցած սովորողների ծնողների օգնությամբ փորձել ենք պարզել ուսումնական առաջադիմության փոփոխության դեպքում նրանց ուսումնական վարքի դրսևորման առաձնահատկությունները: Հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ շախմատային հաջողությունների արդյունքում *ուսումնական առաջադիմության դրական տեղաշարժ արձանագրած սովորողների* մեծամասնության ուսումնական վարքում նկատվում է դասերին մասնակցության ակտիվություն՝ 66,7%, տնային առաջադրանքները կատարելու ինքնուրույնություն՝ 77,4%, նաև ակտիվություն հիմնական սիրելի առարկաների շրջանակներում՝ 76,7%, բացի այդ հարցվողների մեծամասնությունը՝ 63,2%-ը, նշել է, որ երեխան հիմնականում ուշադրությունն ու ջանքերը կենտրոնացնում է շախմատի վրա: Ուսումնական առաջադիմության բացասական տեղաշարժ արձանագրած սովորողների մեծամասնությունը՝ 82%-ը հիմնականում պասիվ է դասաժամերին, 73,3%-ը տնային առաջադրանքները կատարում է ծնողների օգնությամբ, իսկ 69,2%-ն ակտիվ է միայն շախմատի դասաժամերին: Ուսումնական առաջադիմության գրեթե որևէ փոփոխություն չարձանագրած սովորողների մեծամասնությունը՝ 28,5%-ը միշտ ակտիվ է դասերի ժամանակ, 23,3%-ը հիմնականում ակտիվ է մի քանի սիրելի առարկաների

շրջանակում, 23.1%-ը ակտիվ է միայն շախմատի դասաժամերին, իսկ 21.1%-ը հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է շախմատի դասաժամերի վրա:

Ըստ փորձագետների՝ շախմատային հաջողություններն ազդեցություն են թողնում ոչ միայն երեխայի ուսումնական վարքի, այլև սոցիալականացման վրա, որտեղ կարևորվում է նաև ծնողների, ուսուցիչների և մարզիչների դերը: Փորձագետների մեծ մասը, ելնելով երեխաների հետ ունեցած իրենց մասնագիտական գործունեության փորձից, նշում է, որ շախմատային հաջողությունները պայմանավորված են ոչ միայն երեխայի գիտելիքների պաշարով, կարողություններով և հմտություններով, այլև նրանց անձնային որակներով: Հաղթանակների են հասնում այն երեխաները, որոնք ունեն համագործակցային բարձր հմտություններ, պատրաստակամ են աջակցել իրենց ընկերներին, կիսվել շախմատային գաղտնիքներով: Այս տեսանկյունից մարզիչները կարևորում են առողջ մրցակցության առկայությունը, որը ձևավորվում է միայն մարզչի օգնությամբ: Փորձագետների մի մասն էլ նշեց, որ շախմատային հաջողությունների խթան կարող է դառնալ նաև խաղընկերոջ հաղթանակը, և շատ սովորողներ այսօր ձգտում են շախմատային կարգով հավասարվել իրենց ընկերներին: Փորձագիտական հարցազրույցներից նաև պարզ է դառնում, որ հաղթանակները նպաստում են, որ սովորողները դառնան առավել հավասարակշիռ, ուշադիր և զգուշավոր, շախմատային օրենքների շնորհիվ սկսում են կարգուկանոն պահպանել, իսկ տարբեր երկրներում անցկացվող մրցաշարերի ժամանակ նոր մարդկանց, մշակույթների հետ շփման արդյունքում երեխաները դառնում են ավելի ինքնավստահ և շրջահայաց:

Անդրադառնալով շախմատային մրցաշարերին նախապատրաստվելու ծանրաբեռնվածությանն ու դրա ազդեցությանը ուսումնական գործընթացին՝ փորձագետները փաստեցին, որ ծանրաբեռնվածությունը բացասական ազդեցություն չի թողնում երեխայի ուսումնական գործընթացի վրա:

Փորձագետների մեծամասնության կարծիքով այսօր շախմատային կրթությունը խթանում է մի շարք ուսումնական առարկաների նկատմամբ սովորելու ձգտման բարձրացմանը: Այն դատողությունը, որ շախմատն ուղղակիորեն փոխազդում է մաթեմատիկայի հետ, փաստեցին նաև փորձագետները:

Մաթեմատիկան նպաստում է խաղի ժամանակ մտքում հաշվարկներ կատարելու, խաղատախտակը պատկերացնելու, խնդիրներ լուծելու և այլ հաշվարկներ իրականացնելու համար, բայց հակառակը ևս կարելի է ապացուցել, որ շախմատի միջոցով երեխաները կարող են զարգացնել իրենց մաթեմատիկական կարողությունները: Փորձագետները փաստեցին, որ շախմատը ուղիղ կապի մեջ է գտնվում ոչ միայն մաթեմատիկայի հետ, այլև ուսումնական այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են՝ կերպարվեստը, տեխնոլոգիան, որոնք խթանում են երեխայի երևակայության զարգացմանը, գրականությունը, որով պայմանավորված է երեխայի ստեղծարարությունը: Ըստ փորձագետների՝ այսօր կարևորվում է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, մասնավորապես ինֆորմատիկա առարկայի կապը շախմատի հետ, քանի որ ինֆորմատիկայի շրջանակում երեխաները ծանոթանում են վիրտուալ համակարգում կրկնվող և ալգորիթմային գործողություններին, ինչպես նաև բազմատարբերակայնությանը, և այս ամենը կարող է խաղային ռազմավարության հիմնաքարը լինել: Վերլուծելու ունակության զարգացումը հետագայում օգնում է նաև ֆիզիկա առարկան լավ հասկանալ, իսկ հիշողության զարգացումը նպաստում է հումանիտար մի շարք առարկաների լավ յուրացմանը:

### **ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ամփոփելով որակական և քանակական հետազոտությունների արդյունքները՝ պարզ դարձավ, որ շախմատային հաջողությունները դրական ազդեցություն են թողնում երեխայի ուսումնական առաջադիմության վրա, մոտիվացնում երեխային՝ ներգրավվելով ուսումնական գործընթացում: Համեմատելով ծնողների և փորձագետների հետ իրականացված հետազոտության արդյունքները՝ կարող ենք հստակ ընդգծել, որ թե՛ ծնողները, թե՛ փորձագետներն ընդգծում են շախմատային կրթության դերն ու ազդեցությունը երեխայի ուսումնական առաջադիմության վրա՝ մասնավորապես նշելով սպորտային հաղթանակների դերը, որպես ուսումնական մոտիվացիայի խթանման և բարձրացման միջոց: Սպորտային մրցաշարերում հաճախակի հաղթանակները խթան են հանդիսանում, որպեսզի սովորողները հաջողություններ գրանցեն կրթության ոլորտում՝ մասնակցելով մի շարք առարկայական օլիմպիադաների, նաև բարձրացնում են երեխայի ձգտումը՝

ներգրավվելու ուսումնական գործընթացում: Ըստ ծնողների՝ էական փոփոխություններ են նկատվում երեխաների ուսումնական վարքագծում՝ մասնավորապես ակտիվություն բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում և միաժամանակ ջանքերի կենտրոնացում շախմատի վրա: Փորձագետներն իրենց հերթին փաստեցին, որ սպորտային հաղթանակները միայն կարող են օգնել, որ երեխան ունենա բարձր ուսումնական առաջադիմություն: Շախմատային մրցաշարերում դրսևորվող պատրաստակամությունը, մրցակցային ոգին, համառությունը երեխայի մոտ պահպանվում է նաև ուսումնական վարքագծում, երեխան ձգտում է լինել առաջինը ամենուր: Շախմատային հաջողությունների միջոցով երեխաների մոտ ձևավորվում են մի շարք որակներ, կարողություններ և հմտություններ՝ տրամաբանական մտածողություն, ինքնավստահություն, ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցության ձգտում և այլ որակներ: Ե՛վ փորձագետները, և՛ ծնողները նշեցին, որ շախմատային հաջողությունների ազդեցությամբ երեխաների մոտ զարգանում են նաև համագործակցային հմտություններ, իրավիճակում կողմնորոշվելու ունակություն, այլընտրանքային մտածողության ձևեր:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Дворецкий М., Юсупов А.** (2009). *Техника в шахматной игре*. Харьков.
- Burgoyne a. P., Sala G., Gobet F., Macnamara B. N., Campitelli G., Hambrick D. Z.** (2016). The relationship between cognitive ability and chess skill: a comprehensive meta-analysis. *Intelligence*, 59, 72–83.
- Jerrim J., Macmillan L., Micklewright J., Sawtell M., Wiggins M.** (2016). Chess in Schools. Evaluation Report and Executive Summary. *Education Endowment Foundation*.  
[https://educationendowmentfoundation.org.uk/public/files/Projects/Evaluation\\_Reports/EEF\\_Project\\_Report\\_Chess\\_in\\_Schools.pdf](https://educationendowmentfoundation.org.uk/public/files/Projects/Evaluation_Reports/EEF_Project_Report_Chess_in_Schools.pdf)
- Tanajyan K., Melkonyan N., Movsisyan S.** (2021). Chess as a Social Value. *Main Issues of Pedagogy and Psychology*, 19(1), 32–37.  
<https://doi.org/10.24234/miopap.v19i1.390>

- Peter G., Mirko W., Julia Sch.** (2016). Achievement motive and sport participation. *Psychology of Sport and Exercise*, 27, 93–100.  
<https://doi.org/10.1016/j.psychsport.2016.08.007>
- Mirzakhanyan R., Gevorgyan S., Sargsyan V., et al.** (2017). Analysis of the Efficiency of Teaching Chess in Schools. *Sociology Study*, 7(1), 36–42.  
<https://doi.org/10.17265/2159-5526/2017.01.006>
- Sala G, Foley JP, Gobet F.** (2017). The Effects of Chess Instruction on Pupils' Cognitive and Academic Skills: State of the Art and Theoretical Challenges. *Frontiers in Psychology*, 8(238). <https://doi.org/10.3389/fpsyg.2017.00238>
- Trincherro, R., Sala, G.** (2016). Chess training and mathematical problem-solving: the role of teaching heuristics in transfer of learning. *Eurasia Journal of Mathematics, Science & Technology Education*, 12(3), 655–668.

#### REFERENCE LIST

- Dvoreckij M., YUsupov A.** (2009). Tekhnika v shahmatnoj igre (*Technique in chess*). Har'kov.
- Burgoyne a. P., Sala G., Gobet F., Macnamara B. N., Campitelli G., Hambrick D. Z.** (2016). The relationship between cognitive ability and chess skill: a comprehensive meta-analysis. *Intelligence*, 59, 72–83.
- Jerrim J., Macmillan L., Micklewright J., Sawtell M., Wiggins M.** (2016). Chess in Schools. Evaluation Report and Executive Summary. *Education Endowment Foundation*.  
[https://educationendowmentfoundation.org.uk/public/files/Projects/Evaluation\\_Reports/EEF\\_Project\\_Report\\_Chess\\_in\\_Schools.pdf](https://educationendowmentfoundation.org.uk/public/files/Projects/Evaluation_Reports/EEF_Project_Report_Chess_in_Schools.pdf)
- Tanajyan K., Melkonyan N., Movsisyan S.** (2021). Chess as a Social Value. *Main Issues of Pedagogy and Psychology*, 19(1), 32–37.  
<https://doi.org/10.24234/miopap.v19i1.390>
- Peter G., Mirko W., Julia Sch.** (2016). Achievement motive and sport participation. *Psychology of Sport and Exercise*, 27, 93–100.  
<https://doi.org/10.1016/j.psychsport.2016.08.007>

- Mirzakhanyan R., Gevorgyan S., Sargsyan V., et al.** (2017). Analysis of the Efficiency of Teaching Chess in Schools. *Sociology Study*, 7(1), 36–42. <https://doi.org/10.17265/2159-5526/2017.01.006>
- Sala G, Foley JP, Gobet F.** (2017). The Effects of Chess Instruction on Pupils' Cognitive and Academic Skills: State of the Art and Theoretical Challenges. *Frontiers in Psychology*, 8(238). <https://doi.org/10.3389/fpsyg.2017.00238>
- Trincherо, R., Sala, G.** (2016). Chess training and mathematical problem-solving: the role of teaching heuristics in transfer of learning. *Eurasia Journal of Mathematics, Science & Technology Education*, 12(3), 655–668.

## РЕЗЮМЕ

### РОЛЬ ШАХМАТНЫХ ДОСТИЖЕНИЙ В ОБРАЗОВАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

**ТАНАДЖЯН КРИСТИНЕ, ТАНАДЖЯН ЛУСИНЕ**

Цель статьи выявить роль шахматных достижений в учебном процессе и в повышении учебной мотивации. Исследование проводилось с комплексным использованием количественных и качественных методов. Исследование проводилось методами стандартизированного опроса (122) и экспертного интервью (15).

Успехи в шахматах мотивируют ребенка изучать в основном математику, родной и иностранный языки, а остальные предметы несколько выходят за рамки детских интересов.

Благодаря шахматным победам учащие стремятся быть первыми в учебе, спорте и любой деятельности. Под влиянием шахматных успехов в случае положительного сдвига в учебной успеваемости наблюдаются изменения в стремлении к познанию учебных предметов.

Обобщая результаты качественного и количественного исследования, стало ясно, что шахматные успехи положительно влияют на успеваемость ребенка, мотивируют ребенка к включению в процесс обучения. Сравнивая результаты исследования, проведенного с родителями и экспертами, можно однозначно сказать,

что и родители, и эксперты подчеркивают роль и влияние шахматного воспитания на успеваемость ребенка, особо отмечая роль спортивных побед как средства стимулирования и повышения образовательного мотивации. Частые победы в спортивных турнирах являются для учащихся стимулом к достижению успехов в области образования путем участия в ряде предметных олимпиад, а также повышают желание ребенка быть вовлеченным в образовательный процесс.

**Ключевые слова:** шахматы, шахматные достижения и победы, процесс обучения, мотивация, успеваемость.

## ABSTRACT

### ROLE OF CHESS ACHIEVEMENTS IN A PRIMARY SCHOOLCHILD'S LEARNING PROCESS

*TANAJYAN KRISTINE, TANAJYAN LUSINE*

The aim of the article is to identify the role of chess achievement in the learning process and in enhancing learning motivation. The research was conducted using a complex set of quantitative and qualitative methods. The research was carried out by methods of a structured questionnaire survey (122) and an expert interview (15).

Success in chess motivates a child to study mainly mathematics, native and foreign languages, while the other subjects are somewhat outside the scope of children's interests. Due to victories, learners strive to be the first in their studies, in sports and in all activities. The impact of chess is a positive shift in academic achievement and a change in aspirations for learning subjects.

Comparing the results of the study conducted with parents and experts, it becomes clear that both parents and experts stress the role and impact of chess education on a child's academic performance, highlighting the role of sports victories as a tool to stimulate and enhance educational motivation. Frequent victories in sports tournaments are an encouraging factor for pupils to achieve educational success through participation in a number of subject, Olympiads increasing a child's desire to be involved in educational process.

**Key words:** Chess, chess achievements and victories, learning process, motivation, learning progress.

Հոդվածը սրացվել է՝ 02.04. 2023

Հոդվածը ուղարկվել է գրախոսման՝ 10.04.2023

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 15.06.2023

# THE RELATIONSHIP BETWEEN VALUES ORIENTATION AND PERSONALITY MANIFESTATIONS IN SOCIAL WORK ACTIVITY

**STEPANIAN ANUSH**

Public Administration Academy of the Republic of Armenia

*E-mail:* [anushstepanian31@gmail.com](mailto:anushstepanian31@gmail.com)

***DOI: 10.24234/scientific.v2i45.101***

## **ABSTRACT**

Processes happening in modern society affect the life activities fields of a person. They cause such challenges that need modern and competitive decisions. These processes are globalization, digitalization, social-political changes, and others. They affect the job market and demand for specialists. Hence, qualitative components of professional activities have been influenced by the above-mentioned processes. The purpose of the research is to study modern specialists' personal qualities which are conditioned by the globalization and integration processes, concerned with the encounter of cultures, personalities, mentalities, and values.

The research has been conducted with 40 social interaction field specialists (teachers, lecturers, psychologists, and social workers). The results of the research are discussed in the article, and they reveal values orientations in the aspects of both attitudes and social behavior. Besides, a high level of communicability and the presence of an inflexible attitude to innovation have been revealed as a result of the discussion about specialists' personal features.

**Keywords:** behavior, career, communication, innovation, personal features, social interaction, society, values.

## **INTRODUCTION**

The modern world is subject to continuous changes. Those changes happen to be both at global and local levels. They may occur in different fields of society regulation, such as social, education, political, economic, business, and other interrelated fields. Because of the comprehensive influence of developments in modern societies, ongoing

research should be done. Any society transformation directly affects society members and activities in their personal and professional life. According to changes in professional activities, the management processes such as human resources management undergo transitions as well. Changes occur in working conditions, career development processes, demand for specialists, the job market, and management processes in particular.

Any society has a complex system of interrelated elements that are affected by constant processes happening in societies and therefore are in constant motion. As a society member, each person obeys the process specifications of a certain society, he/she is living in. Thus, changes happening in society affect the persons and their personal and professional activities. Rules and regulations and cultural values are specific and unique for each society and manifest accordingly.

One of the most important issues for individuals in modern societies is professional activity and processes related to it. Those include career choice, planning, education, career development, promotion, self-establishment, and self-actualization. In career-related processes, the following points should be taken into consideration:

- society problems;
- social-economic regulations;
- political situation;
- geopolitical relations and policy.

Those issues clearly define human resources management policy and the tendencies of the career development process (Богдан Н.Н. & Могилёвкин Е.А., 2003).

According to the peculiarities of transformational societies, different fields of society regulation are exposed to changes, particularly the education system, business relations, management, and administration. The problem of psychological selection appeared in human resources management, in particular. This implies that in the recruitment process, not only professional qualities are considered, but also personal peculiarities. These include such features as motivation orientation, emotional stability, intelligence, interpersonal competencies, communication skills, conflict management skills, sense of responsibility, innovative thinking, and sociability. Besides the mentioned

features, the principles of professional ethics are also an important part of the recruitment process.

One of the features of modern society is the role of informational technologies and digitalization. Modern society is considered to be a “Society of knowledge” (Савченко И.В., 2008). During the recruitment process specialists with creative, innovative thinking, leadership skills, and broad interests are privileged.

The modern world is characterized by such processes as globalization, and integration, that lead to cooperation and communication between members of different cultures and societies. Here several barriers appear, which are due to the fact of cultural differences, mentalities, world views, and ideologies. The basis of those differences is value systems in particular.

The formation of values and values systems have always been the point of attention in different social disciplines. Thus, the research directions vary. R. Smith and S. Schwartz define values as:

- beliefs, ideas that are not objective, which are accompanied by emotional expressions;
- standards and norms which help to evaluate behavior, people, and events (Smith, Schwartz, 1997).

In addition to this, values help to achieve the chosen goals. They have a certain hierarchy according to their importance. This varies in different societies and cultures. This is the reason that some values research results can indicate both common and specific values. Common values are considered to be common to all mankind, whereas specific values are typical to a certain culture. The results of research vary accordingly to different cultures.

Values are crucial in the behavior formation process. According to S. Schwartz, values reveal the biological and social needs of individuals, and group needs simultaneously. This is an interesting point while studying the differences between individual and cultural values systems. For instance, based on his research, S. Schwartz found, that East Asian nations highlight hierarchy and conservatism, whereas European nations emphasize egalitarianism and individual autonomy (Schwartz, 2003). S.Schwartz

signifies that in values research cultural values should be the point of interest instead of individual values.

Those specialists whose activities have been affected by the changes and contemporary processes of the modern world are considered to be modern specialists. Taking into consideration the importance of personal features and values peculiarities research has been settled to figure out the manifestations of the above-mentioned factors among modern professionals in the social interaction field.

### **METHODOLOGY**

The aim of the research was to find out the values orientations and personal features of modern specialists. In order to conduct the research the following methodologies have been used:

1. The Schwartz Value Survey;
2. The Minnesota Multiphasic Personality Inventory (MMPI) short form.

The Schwartz Value Survey lets us determine the hierarchy of values both in the level of beliefs and the level of behavior. The Value Survey is universal and appropriate, as it was validated in different cultures and societies. S.Schwartz developed the survey to be common to all mankind, cultures, and societies. For this purpose he distinguished 10 common values, that are represented in two lists in the survey, reflecting normative values and behavior values. Normative values influence the personality, but they rather manifest in social behavior. The other type of values becomes apparent in social behavior. The methodology is aimed at revealing the influence of values on behavior, beliefs, and thoughts. The values are the following: power, achievement, hedonism, stimulation, self-direction, universalism, benevolence, tradition, conformity, and security (КарандашевВ. Н., 2004).

The Minnesota Multiphasic Personality Inventory (MMPI) is a psychological testing method studying personality qualities. For the following research the short form, consisting of 71 questions, has been used, to determine the main personality peculiarities. The short form lets us determine the main personal features that manifest in social behavior. Nowadays this form is commonly used by modern human resources specialists in personnel selection, development, and other processes. This certain form of

methodology allows us to assess the scales of defensiveness (K), infrequency (F), and lie (L). Those scales let us decide the validity and reliability of the results. The personal factors include eight scales, which are: hypochondriasis (Hs), depression (D), hysteria (Hy), psychopathic deviate (Pd), paranoia (Pa), psychasthenia (Pf), schizophrenia (Se), and hypomania (Ma). Using the short form of the methodology allows us to find the main personality accentuations, the possible defection of social-psychological adaptation, and personality peculiarities (Райгородский Д.Я., 2001).

## **DISCUSSION**

In order to assure the reliability of the results it is necessary to fulfill the requirements for the size of the sampling. The following research implies a comparison between the features within the sampling, so the size should be not less than 30-35 people (Наследов А.Д., 2004). The research was organized with 40 professionals in the social interaction field. All participants were currently working at the time of conducting the research and had an experience of 3 and more years in this field. The group included teachers, lecturers, psychologists, and social workers.

The results of the Schwartz Values Survey are summarized for each value according to the key. The results are ranked according to the points in comparison to other values. Thus interval scales are formed according to the importance of values. Important values are ranked from 1 to 3, and the low important values are ranked from 7 to 10. Thus, values of average importance are ranked from 4 to 6 (Карандашев В. Н., 2004). Hence, 3 intervals are formed: most important, average important, and low important. The average grades and standard deviation of normative values are represented in Table 1.

*Table 1. Schwartz Value Survey. Normative values*

Social Interaction Specialists		
Normative value	M (Average)	đ (Standard Deviation)
Conformity	4.1	2.2
Tradition	6.3	2.2
Benevolence	4.6	2.6
Universalism	4.5	2.4
Self-Direction	4.6	2.2
Stimulation	<b>6.8</b>	2.8
Hedonism	5.4	2.9
Achievement	4.6	2.1
Power	<b>8.0</b>	1.9
Security	3.4	2.3

The average grades and standard deviation of behavioral values are represented in Table2.

*Table 2. Schwartz Value Survey. Behavioral values*

Social Interaction Specialists		
Behavioral value	M (Average)	đ (Standard Deviation)
Conformity	5.0	2.1
Tradition	<b>6.6</b>	2.4
Benevolence	4.3	2.3
Universalism	4.4	2.1
Self-Direction	3.8	2.1
Stimulation	6.4	2.7
Hedonism	5.9	2.8
Achievement	5.4	1.9
Power	<b>8.4</b>	2.2
Security	3.4	2.5

Summarizing the average results of the Schwartz Values Survey, the following conclusions have been done. The most important value both at normative and behavioral levels is Security. Security implies the safety, balance, and harmony in society, a person's relationships, and the self. The less important normative and behavior value is Power, which reflects the attainment of social status and prestige, and dominance over people and resources. Also, Stimulation can be implied as a low important normative value. Stimulation is the orientation toward innovation and changes. At the level of behavioral values Tradition is considered to be a low important value.

The results here are noteworthy. Social interaction specialists deal with people in their working activities and therefore security considerations become an important part of their personality, which also manifest in their behavior. Taking into account the altruistic essence of these specialists explains the low assessment of Power. The results of Stimulation and Tradition lead us to certain conclusions. Stimulation is a low important value at the normative level, which means that specialists don't believe in innovation, new methods, and changes in the deep level of their beliefs and attitudes. At the same time, Tradition becomes a low important value in the level of behavior, which means that specialists tend to demonstrate a low interest in traditions and conservative ideas. It is obvious that despite this fact, specialists don't accept the new ways in their core conceptions as well.

The remaining values were assessed as average important and the meaning of them are as follows:

- Achievement – personal achievements;
- Hedonism – pleasures;
- Universalism – aim for the welfare of mankind and nature;
- Self-Direction – independence of thoughts and actions;
- Benevolence – aim for the welfare of close people;
- Conformity – regulation of actions that are socially unacceptable (КарандашевВ. Н., 2004).

The MMPI test results are summarized for each scale according to the key. The noticeable personality features and accentuations can be analyzed according to the

intervals of the test. Thus, if the scales are less than 45, those scales are considered not manifesting in the personality. Scales from 46 to 55 belong to a balanced personality. Scales from 56 to 66 display the main personality features and directions. Scales from 67 to 75 show the accentuations that can sometimes lead to social desadaptation. 75 and above reveal personality deviations, which can be caused by stress, extreme situations, and neurosis (Райгородский Д.Я., 2001).

The average results of the MMPI method are represented in Table 3.

*Table 3. MMPI. Personality scales*

Social Interaction Specialists		
Personality scale	M (Average)	σ (Standard Deviation)
1) Hypochondriasis (Hs)	48.4	6.9
2) Depression (D)	42.3	6.9
3) Hysteria (Hy)	45.9	8.6
4) Psychopathic deviate (Pd)	37.2	11.5
6) Paranoia (Pa)	47.6	12.2
7) Psychasthenia (Pf)	44.3	13.1
8) Schizophrenia (Se)	44.9	12.4
9) Hypomania (Ma)	<b>55.0</b>	11.5

According to the test average results Hypomania tends to be the main personality feature. Hypomania is peculiar to optimistic people in any situation in life, who have a good mood, an active position in life, and self-confidence. An important peculiarity of those personalities is a high level of sociability and good interpersonal skills. These personalities reveal themselves well in social activities. They need to satisfy their aim for communication, being public. This is an interesting point where we see that personal peculiarities help in professional activities, and vice versa profession forms some features in specialists' personalities.

Other scales perform in a balanced way and are not expressing much in personality manifestations. Although, a few scales are noticeable in comparison with others, as they are situated in a higher interval. These are Hypochondriasis, Hysteria,

and Paranoia. Hypochondriasis reveals personalities who aim to control the behavior and actions of self and others. This personality relies on rules, and instructions, and regulates behavior accordingly. This characteristic is common for teachers. Hysteria or emotional lability discovers people with expressive, candid personalities, emotional mentality, and artistic dispositions. In the professional field, these people search for highly-communicative activities. Paranoia reveals a solid and rigid type of thinking process. Those people hardly adapt to changing environments; they value exactness, precision, and accuracy. This leads to rigid behavior and difficult adaptation.

Therefore, despite high communicability, active position, and artistic tendencies, the specialists have certain attitudes to social behavior, which are essential and strong and manifest in deep levels of personality and mentality. Taking into consideration the social nature of their professional activities, rigidity may lead to interpersonal conflicts. It is important to develop flexible attitudes and tolerance, preserving traditions and not confronting them.

## **CONCLUSIONS**

Continuous changes and developments, happening in societies, caused by global processes, lead to constant research and changes in different social fields. Those changes affect society members at individual and group levels. This means that changes happen in the processes of personal and career development and social behavior accordingly. Values system and personal features have a huge influence on social behavior.

The results of the research lead us to significant conclusions. Hence, the fact of being highly communicative is obvious according to both test results. This is helpful and appropriate considering the peculiarities of professional activities in the social field. Despite, taking into account the results of both tests, the rigidity to changes, innovations, new methods, and approaches becomes an important issue to pay attention to. In the modern world, the ongoing processes bring novelties constantly, that demand new regulations and adaptation to changing conditions. However, the rigidity manifests in deep levels of personality such as core values and mentality, which is more difficult to change. Society's attitude to novelties and society peculiarities should be taken into

consideration which broadens the problem and takes the research to a new expansive level. The discussion of the issue is ongoing as society develops and changes constantly.

## REFERENCES

- Schwartz, S. H.** (2003). Universals in the content and structure of values: theoretical advances and empirical tests in 20 countries. *Advances in Experimental Social Psychology, 25*(65).
- Smith, P. B., & Schwartz S. H.** (1997). *Values. Handbook of Cross-Cultural Psychology* (Vol. 3). Boston, MA: Allyn and Bacon.
- Богдан Н.Н., Могилёвкин Е.А.** (2003). *Технология карьеры*. Владивосток, Россия: Изд-во ВГУЭС.
- Зайцев В.П.** (1981). Вариант психологического теста Mini-Mult. *Психологический Журнал, 3*.
- Карандашев В.Н.** (2004). *Методика Шварца для изучения личности*. Санкт-Петербург: РЕЧЬ.
- Райгородский Д.Я.** (2001). *Практическая психодиагностика*. Самара: Издательский дом «БАХРАХ-М».
- Савченко И.В.** (2008). *Информационное общество или общество знаний. Современные наукоемкие технологии*. Москва: Издательский дом “Академия Естествознания.”

## REFERENCE LIST

- Schwartz, S. H.** (2003). Universals in the content and structure of values: theoretical advances and empirical tests in 20 countries. *Advances in Experimental Social Psychology, 25*(65).
- Smith, P. B., & Schwartz S. H.** (1997). *Values. Handbook of Cross-Cultural Psychology* (Vol. 3). Boston, MA: Allyn and Bacon.
- Bogdan N.N., Mogilyovkin E.A.** (2003). *Tekhnologiya kar'ery(Career Technology)*. Vladivostok, Rossiya: Izd-vo VGUES.

- Zajcev V.P.** (1981). Variant psihologicheskogo testa Mini-Mult(*A variant of the psychological test Mini-Mult*). Psihologicheskij ZHurnal, 3.
- Karandashev V.N.** (2004). Metodika SHvarca dlya izucheniya lichnosti(*Schwartz's methodology for studying personality*). Sankt-Peterburg: RECH'.
- Rajgorodskij D.YA.** (2001). Prakticheskaya psihodiagnostika(*Practical psychodiagnosics*). Samara: Izdatel'skij dom «BAHRAH-M».
- Savchenko I.V.** (2008). Informacionnoe obshchestvo ili obshchestvo znaniy(*Information Society or Knowledge Society*).Sovremennye naukoemkie tekhnologii. Moskva: Izdatel'skij dom “Akademiya Estestvoznaniya.”

## ԱՄՓՈՓՈՒՄ

### ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ

### ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՊԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՆՈՒՇ

Ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացները ազդում են անձի կենսագործունեության ոլորտների վրա: Դրանք առաջացնում են այնպիսի մարտահրավերներ, որոնք պահանջում են ժամանակակից և մրցակցային լուծումներ: Նմանատիպ գործընթացներ են գլոբալիզացիան, թվայնացումը, սոցիալ-քաղաքական փոփոխությունները և այլն: Վերջիններս առնչվում են նաև աշխատաշուկային և մասնագետներին ներկայացվող պահանջներին: Հետևաբար, մասնագիտական գործունեության որակական բաղադրիչները ենթարկվել են փոփոխությունների վերը նշած գործընթացների ազդեցության արդյունքում: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ժամանակակից մասնագետների անձնային որակները, որոնք պայմանավորված են գլոբալիզացիայի և ինտեգրացիայի գործընթացներով՝ կապված մշակույթների, անհատականությունների, մտածելակերպերի և արժեքների բախման հետ:

Հետազոտությունն իրականացվել է սոցիալական փոխազդեցության ոլորտի 40 մասնագետի հետ (ուսուցիչներ, դասախոսներ, հոգեբաններ և սոցիալական աշխատողներ): Հոդվածում քննարկվում են հետազոտության արդյունքները,

որոնցով բացահայտվել են արժեքային կողմնորոշումներ թե՛ դիրքորոշումների, թե՛ սոցիալական վարքի դիտարկման տեսանկյունից: Բացի դրանից, մասնագետների անձնային առանձնահատկությունների քննարկման արդյունքում հայտնաբերվել է հաղորդակցման բարձր մակարդակ և նորարարությունների նկատմամբ ոչ ճկուն մոտեցման առկայություն:

**Բանալի բառեր՝** վարք, կարիերա, հաղորդակցում, նորարարություն, սոցիալական փոխազդեցություն, անձնային որակներ, հասարակություն, արժեքներ:

**РЕЗЮМЕ**  
**СВЯЗЬ ЦЕННОСТНЫХ ОРИЕНТАЦИЙ И ЛИЧНОСТНЫХ ПРОЯВЛЕНИЙ В**  
**СОЦИАЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ**  
**СТЕПАНЯН АНУШ**

Процессы, происходящие в современном обществе, влияют на сферы жизнедеятельности личности. Это приводит к таким вызовам, которые требуют современных и конкурентных решений. Такими процессам являются глобализация, оцифровывание, социально-политические сдвиги и прочее. Эти изменения влияют на рынок труда и требования к специалистам. Следовательно, качественные составляющие профессиональной деятельности подвергаются изменениям под влиянием вышеупомянутых процессов. Цель исследования состоит в изучении личностных качеств современных специалистов, которые обусловлены процессами глобализации и интеграции, связанные со столкновением культур, индивидуальностей, менталитетов и ценностей.

Исследование было осуществлено с 40 специалистами сферы социального взаимодействия (преподаватели, психологи, социальные работники). В статье обсуждаются результаты исследования, которыми были выявлены ценностные ориентации с точки зрения и убеждений, и социального поведения. Кроме того, в результате исследования личностных особенностей специалистов обнаружены высокий уровень коммуникативности и наличие негибкого отношения к новшествам.

**Ключевые слова:** поведение, карьера, коммуникация, инновация, личностные качества, социальное взаимодействие, общество, ценности.

Հոդվածը ստացվել է՝ 22.04. 2023

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 27.04.2023

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 04.07.2023



Խ.ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ Х. АБОВЯНА  
ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY AFTER KH. ABOVYAN

<http://scientificnews.aspu.am/>